ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

Հոդված 206.14. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին անհրաժեշտ տեղեկությունները կամ պահանջվող նյութերը չտրամադրելը

1. ~~Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների պաշտոնատար անձանց~~ Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, այլ անձանց կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին սահմանված ժամկետում պահանջվող նյութերը, փաստաթղթերը կամ այլ տեղեկություններ չտրամադրելը, ~~բացառությամբ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների~~, քննարկվող հարցի ուսումնասիրման ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ անվճար ուսումնասիրություններ չանցկացնելը և անվճար փորձաքննություններ չկատարելը և դրանց արդյունքները չներկայացնելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով: